

Հովհաննես Թումանյան

Ինչո՞ւ էդպես ինձ մոռացար...

Ինչո՞ւ էդպես ինձ մոռացար,
Ասավ աղջիկն ինձ մի օր:
Ինչո՞ւ էդպես մեզ մոռացար,
Գանգատվեցին սար ու ձոր:

Ո՛հ, մի՛ հարցնեք, հին ընկերնե՛ր,
Ինչու էլ չեմ երգում ձեզ.
Շատ եմ փոխվել էն օրից վեր.
Էնպես մի ցա՛վ ունեմ ես...

Ի՞նչ է ցավդ, մի ճար անենք,

Ասավ աղջիկն անձնվեր.
Ի՞նչ է ցավդ, տո՛ւր մենք տանենք,
Ասին սարերն ու ձորեր:

Ո՛հ, չէ, սիրո՛ւն, էլ ոչ մի սեր
Ճար չի անիլ իմ սըրտին,

Դուք էլ, անուշ սար ու ձորեր,
Չեք դիմանա էս դարդին:

Յատուկ Պոէմ

1900

Յաւուն Պոեմ